ՎԱՐԴԱՆ ԱՍՅԱՏՐՅԱՆ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Նախաբան

Անառարկելի է, որ մարդու իրավունքները կարևոր միջոց են ժամանակակից հասարակական կառույցի համար: Մարդու իրավունքների հայեցակարգը, որքան էլ այն աշխարհիկ (սեկուլյար) համարվի, հիմնված է յուրաքանչյուր առանձին մարդու բարեկեցության մասին հոգատարության գաղափարի վրա, որը բխում է եվրոպական մշակույթի հիմքում ընկած քրիստոնեական արժեհամակարգից: Հետևաբար, շատ կարևոր է, որ համընդհանուր տարածում գտնող այդ միջոցը հետազայում ևս ծառայի մարդուն և հասարակությանը:

Ուղղափառ քրիստոնյաների ըմբռնմամբ մարդու իրավունքների զարգացման և դրանց կիրարկման գործում գնալով ավելի մեծ տեղ են գրավում որոշ միտումներ, որոնք վտանգավոր են այդ բարձր նպատակի համար: Մարդու իրավունքների ինստիտուտի զարգացման վրա ավելի հաճախ է ազդում մարդու բնության մասին պատկերացումների սահմանափակ շրջանակը: Սակայն նման պատկերացումների հետ համաձայն չեն մոլորակի բնակչության մեծամասնությունը: Մյուս կողմից հաճախ իրավապաշտպան հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններն իրենց եզրակացությունը կազմում են փորձագետների նեղ շրջանակի կարծիքների հիման վրա: Շատ ազգային պետություններ հայտնվում են այդ սուբյեկտների հզոր ազդեցության ներքո և կորցնում են իրենց ժողովուրդների ունեցած իրական արժեքային տրամադրություններն իրացնելու ունակությունը:

Արդյունքում վերասերվում է ազգային ինքնությունը, մշակութային դիմագիծը: Նման վիճակի հետագա զարգացումը հանգեցնում է ներհասարակական, ներընտանեկան ու ներանձնային հակասությունների, փոխվում են արժեհամակարգերը, ձևավորվում են երկակի չափանիշներ, որոնք իրենց հերթին առաջ են բերում նորանոր խնդիրներ (անբարոյականություն, թմրամոլություն, օտարացում, ընտանիքների քայքայում, ծնելիության անկում, ազգային հավաքականության մասին պատկերացման փոշիացում և այլն): Ամբողջը բաժանվում է հակադրվող մասերի՝ պայմաններ ստեղծելով ներհասարակական հակամարտությունների համար: Որքան էլ զարմանալի թվա, դրանով, փաստորեն, ոտնահարվում է նաև ազգային ինքնության ու մշակույթի պահպանմանն ուղղված եվրոպական կոնվենցիան:

Աշխարհիկացման միտումը և մարդու իրավունքների շրջանակի ընդլայնումը.

Ուղղափառ քրիստոնյաների համար ակնհայտ է, որ չի կարելի մարդկային արժանապատվությունը պատկերացնել առանց հոգևոր-կրոնական և բարոյական չափանիշների: Այնինչ, հանուն մարդու իրավունքների հայեցակարգի համընդհանուր ըն-

դունելության ապահովման, այն հեռու է պահվում կրոնից: Արդյունքում կրոնական հայեցողությունները հայտարարվում են լոկ մասնավոր գործ և չեն դիտարկվում որպես ժամանակակից իրավունքի, այդ թվում նաև մարդու իրավունքի աղբյուր: Սա տեղի է ունենում չնայած այն փաստին, որ տարածված գնահատականի համաձայն մոլորակի բնակչության մոտ 80%-ը կրոնական համոզմունքներ ունեն:

Ընդհակառակը, հնչում են կրոնական հայեցողությունները ոչ կրոնական (աշխարհիկ) գաղափարների հիման վրա ձևավորված իրավական նորմերին ենթակա դարձնելու պահանջներ: Համաձայն մարդու իրավունքների աշխարհիկ հայեցակարգի, որը բարոյական նորմերով չհավասարակշռված և միակ ճշմարիտը լինելու հավակնող մի մոտեցում է, բոլոր մնացյալ ավանդությունները պետք է լռեն ու ենթարկվեն: Մարդու իրավունքների նման ընկալման կողմնակիցների դիկտատորական այս մոտեցումը իրողություն է, որը վստահորեն իր համար ճանապարհ է հարթում ժամանակակից միջազգային օրենսդրության մեջ: Դա հանգեցնում է կյանքի հանդեպ ագնոստիկ կամ նույնիսկ մատերիալիստական մոտեցման գերակայության, ինչն արդարացիորեն առաջ է բերում հավատացյալ մարդկանց դժգոհությունը:

Գործնականում դա տանում է դեպի հանրային ոլորտից կրոնական ծեսերի, խորհուրդների, գաղափարների արտաքսում: Արդյունքում, անգամ ամենասիրված քրիստոնեական Ս. Ծննդյան տոնը շատ արևմտյան երկրներում կորցրել է իր անունը. այժմ այն կոչում են սեզոնային տոն, որի համար մեծ ջանք դրեցին պետությունները: Մարդու իրավունքների դիրքերից արդարացվում են կրոնական խորհուրդների և ուսմունքների վիրավորանքն ու խեղաթյուրումը: Այդ նույն դիրքերից այսօր ջանում են դպրոցներում տեղական կրոնի հիմունքների ուսումնասիրման փոխարեն ուսումնական առարկա դարձնել տարբեր կրոնների հետ ծանոթացման ինչ-որ կուրս:

Մի խոսքով, աշխարհիկ մոտեցումը, փաստորեն, պարտադրում է մարդկանց հրաժարվել հանրային կյանքում սեփական հավատի արտահայտումից: Դա տանում է դեպի անկրոն հասարակության կառուցում, ինչին չի կարող աջակցել իրական հավատ ունեցող և ոչ մի մարդ:

Ավելին, ակնհայտ է ծայրահեղ ֆեմինիստական տեսակետների ու միասեռական հայացքների հզոր ազդեցությունը իրավապաշտպան գործունեության ոլորտում ձևավորվող նորմերի, հանձնարարականների, ծրագրերի վրա, որոնք կործանարար են ընտանիքի ինստիտուտի և բնակչության վերարտադրության համար: Բացի այդ, աբորտը որպես կնոջ իրավունք դիտարկելը հանգեցրեց այն բանին, որ միջազգային կազմակերպությունները խուլ ու համր են դարձել սաղմնավորված երեխայի ապրելու իրավունքի նկատմամբ: Այսօր այլևս հողում չեն անում բարոյականությանը, երբ փորձեր են կատարում մարդու էմբրիոնի հետ:

Վերջին տարիներին մարդու իրավունքների ոլորտում այնպիսի միտումներ են զարգանում, որոնք հավատացյալ մարդկանց կողմից գնահատվում են որպես երկակի. մի կողմից մարդու իրավունքները ծառայում են բարօրությանը, մյուս կողմից մեր աչքերի առջև մարդու իրավունքների հայեցակարգի միջոցով թաքցվում են կեղծիքը, սուտը, կրոնական ու ազգային արժեքների վիրավորանքը: Ավելին, մարդու իրավունքների ու ազատությունների կոմպլեքսի մեջ աստիճանաբար ներմուծվում են գաղափարներ, որոնք հակասում են մարդու մասին ոչ միայն քրիստոնեական, այլ

ընդհանրապես ավանդական բարոյական պատկերացումներին: Սա հատկապես վտանգավոր է, քանի որ մարդու իրավունքները պաշտպանվում ու առաջ են մղվում պետության հարկադիր ուժի միջոցով, որը կարող է ստիպել մարդուն մեղք գործել, համակարծիք լինել մեղքի կատարմանը կամ թույլ տալ այն՝ հասարակ կոնֆորմիզմից ելնելով:

Այդպես է, օրինակ, համասեռամոլության պարագայում: 2006 թ. հունվարին Եվրախորհրդարանի ընդունած համապատասխան բանաձևը նախատեսում է դպրոցներում աշակերտներին դաստիարակել համասեռամոլությունն ընդունելու ոգով և անգամ տարվա մեջ մի օր է նշում, որը պետք է նվիրված լինի հոմոֆոբիայի դեմ ուղղված պայքարին: Այսինքն, Եվրախորհրդարանը ոչ միայն կոչ է անում հասարակությանը հարգել որոշակի փոքրամասնության կյանքը, այլև նրա վզին որպես նորմ է փաթաթվում համասեռամոլության քարոզը: Արդյունքում այդ քարոզը գայթակղում է նրանց, ովքեր կարող էին պայքարել այդ չարիքի դեմ և լիարժեք ընտանիքներ ստեղծել:

Մյուսը՝ 2005 թ. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ասամբլեան ընդունեց «Կանայք և կրոնները Եվրոպայում» բանաձևը, որում ասվում է. «Դավանանքի ազատությունը սահմանափակվում է մարդու իրավունքներով»: Այս պնդումը կրոնական կյանքը դնում է մարդու իրավունքների ենթակայության տակ: Հավատացյալ մարդու համար դա հնչում է որպես հանուն մարդկային պատկերացումների Աստծո կամքին հակառակվելու կոչ:

Ինչպես տեսնում ենք, բարոյական նորմերի անտեսումն ու աշխարհիկացման բացարձակացման միտումն ակնհայտորեն արտահայտվում է նաև միջազգային իրավական նորմերում: Այսպես, ՄԱԿ-ի ստանդարտները, որոնք հենվում են նաև 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի վրա, ենթադրում են ընտրության իրավունքի սահմանափակում «բարոյականության արդարացի պահանջների բավարարման» համար, նախատեսվում է, որ ազատությունը պետք է հավասարակշռվի պատասխանատվությամբ[1]: Այնինչ նորաստեղծ փաստաթղթերում, ինչպես օրինակ, Եվրամիության Հիմնական իրավունքների խարտիայում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում այդ դրույթներն այլևս գոյություն չունեն:

Շատ երկրներում ազատության անվան տակ ակտիվորեն զարգանում է առևտրային արդյունաբերությունը, որը քարոզում է անբարոյական ապրելակերպ: Սակայն մարդը պետք է ունենա բռնության, թմրադեղեր ու ալկոհոլ օգտագործելու, խաղամոլության, սեռական սանձարձակության քարոզից պաշտպանված լինելու իրավունք:

Արևմտյան հայեցակարգի խոցելի կողմերից է նրա տնտեսական համակարգը: Եվրոպական մտածողության մեջ ձևավորված է միջոցը, գործիքը ինքնաբավ նպատակի վերածելու միտում: Դրա վառ օրինակն է աշխարհում տիրող տնտեսական իրավիճակը. տնտեսությունը որպես ինքնաբավ արժեք ընկալելը հանգեցրել է արժեքային կողմնորոշիչների տեղաշարժի և գլխավոր դեր է ստանձնում նյութական հարստութ-

[1] «Հասարակության մեջ անձի ազատ ու լիարժեք զարգացման համար յուրաքանչյուր ոք պետք է հետ–ի փվյալ հասարակության մեջ իր ունեցած պարտականությունների կատարմանը»:

յան հասնելու ձգտումը: Սակայն, ինչպես Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Վ. Շելով-Կովեդյանն է տեղին նշում. «տնտեսապես հաջողակ եվրոպական երկրներում տնտեսությունը որպես գործիք չի գործում հասարակության վերարտադրության ոլորտում, ինչն ի վերջո կարող է հանգեցնել դրա կործանմանը»:

Հարկ է հաշվի առնել, որ տնտեսական զարգացման վրա ազդում է ոչ միայն ինտելեկտուալ հզորությունը, նոր տեխնոլոգիաներ ստեղծելու ունակությունը, այլև բարոյական հիմքը, հոգևոր ուժը: «Առաջիկայում պետք է որոշվի մարդկության հիմնարար խնդիրը՝ ինչն է ավելի կարևոր՝ ոսկե հորթի պաշտամունքը, թե դարերով ավանդական կրոններում ամրագրված բարոյական կարգի արժեքները», - ասում է ՌԴ պետդումայի պատգամավոր Ս. Յու. Գլազևը: Իսկ ահա ՌԴ ԳԱԱ ակադեմիկոս Դ. Ս. Լվովն անհրաժեշտ է համարում փոխել տնտեսության աքսիոմատիկան. «Տնտեսական գործընթացները կարգավորող աքսիոմաներ պետք է դառնան բարոյական նորմերը. մեկ մարդու սեփականություն չի կարող լինել այն, ինչը մարդկային ձեռքերով չի ստեղծված»:

Արդի աշխարհի գլոբալ ճգնաժամի դրսևորումներից են սրբության ծաղրանքը, Իրաքի դեմոկրատացման փորձի ձախողումը, գլոբալացման դեմ աճող շարժումը:

Մարդու իրավունքները չպետք է հակասեն բարոյական նորմերին, որոնք մարդկանց մեծամասնության կողմից ընդունվում են որպես վարքի ցանկալի նորմեր: Չպետք է լինի ազատություն բարոյականությունից, պատվից ու խղճից:

Հանուն արդարության պետք է նշել, որ չի կարելի մեղադրել մարդու իրավունքների բուն հայեցողությունը, որը, ինչպես ասացինք, ունի քրիստոնեական ակունքներ: Տվյալ դեպքում մարդու իրավունքների քողի տակ թաքնվում է մարդկանց նեղ շրջանակի կողմից դավանվող որոշակի մի փիլիսոփայություն: Տվյալ դեպքում, համաձայն այդ փիլիսոփայության, եթե կանանց քահանա ու եպիսկոպոս չեն ձեռնադրում, ապա այդ համայնքը պետք է ենթարկվի պետական պատժի և հասարակական պարսավանքի: Եթե աշխարհիկ հումանիստական այս մարտնչող տրամադրությունը, որը թափանցում է միջազգային իրավունք, այսօր չչեզոքացվի, ապա ինքնաբերաբար կառաջանա մի նոր լուրջ հակամարտություն:

Գերակայության ձգտման մեկ այլ դրսևորում է այն ուլտրալիբերալ թեզը, ըստ որի «մարդու իրավունքները գերակայում են հասարակության շահերին»: 2005 թ. այն կրկնեց ՅՈՒՆԵՍԿՈ-ն իր «Բիոէթիկայի համապիտանի սկզբունքների մասին» հռչակագրում. «Անհատի շահերն ու բարօրությունը պետք է գերակայեն գիտության կամ հասարակության շահերին»: Նման մոտեցումը խիստ վտանգավոր է, եթե մարդը սկսի իր վարքը ձևավորել՝ ելնելով հասարակության շահերի նկատմամբ սեփական շահերի գերակայությունից: Դա կխթանի միայն էգոիզմը: Այնինչ, ազատություններն ու իրավունքները մշտապես պետք է հավասարակշռվեն հասարակական համերաշխությամբ:

Եթե ոմանք ցանկանում են այդպես ապրել, դա, իհարկե, իրենց գործն է, սակայն ինչո՞ւ պետք է նրանց հայացքները հարկադրանքով՝ իրավաբանական համակարգի միջոցով, պարտադրվեն այլ հայացքներ ունեցող մարդկանց: Ինչու պետք է փոքրամասնության կարծիքը փաթաթվի մեծամասնության վզին. ի՞նչ է, հիմա էլ բոլշևիզմից անցնում ենք մենշևիզմի՞: Բավակա՞ն չէին նախորդի ավերածությունները:

Կարծում եմ, որ մեր ժողովրդի քրիստոնեական ընկալմանը հակասող նորմերը

անընդունելի են Հայ Եկեղեցու և նրա հետևորդների համար:

Իսկ ինչ վերաբերում է համաշխարհային համակեցության կյանքի ընդհանուր սկզբունքների մշակմանը, ապա դա պետք է կատարվի տարբեր քաղաքակրթությունների հետ համատեղ:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Մարդու իրավունքների հայեցակարգը և տարբեր քաղաքակրթությունները.

Մարդու իրավունքների հայեցակարգը ծնունդ է առել ու զարգացել արևմտյան երկրներում՝ վերջիններիս առանձնահատուկ պատմական ու մշակութային ճակատագրի շրջանակում: Այն հիմնված է բնական իրավունքի վրա: Յուրաքանչյուր մարդ օժտված է որոշակի իրավունքներով ու ազատություններով, քանի որ նա ծնվել է և պատկանում է մարդկային ցեղին: Այդ իրավունքների աղբյուր է հանդիսանում մարդուն ծնունդ տված բնությունը: Բնությունն է մարդուն օժտում բանականությամբ, և իր նմանների և բնության հետ հարաբերության ոլորտում մարդը հանդես է գալիս որպես արարիչ մշակույթի, ինչը բնությունից տրամագծորեն տարբերվող իրականություն է: Մշակույթի տարածության մեջ մարդու իրավունքների սուբյեկտները, այսինքն բոլոր «որպես մարդ ծնվածները» միմյանց հավասար են և ընդհանուր կյանքի սուվերեն համամասնակիցներ են: Հավասար իրավունքներ ունեցողների համայնքում ի ծնե ունեցած ազատությունների և իրավունքների իրագործումը պահանջում է փոխհարաբերության որոշակի մշակույթ, այսինքն մի ինչ-որ կոնվենցիա (դաշնագիր), որի դերում, ի թիվս այլոց, հանդես է գալիս մարդու իրավունքների կոնվենցիան: Ըստ նույն հայեցակարգի, մարդ անհատն արժեքային իմաստով սոցիալական իրականության ոչ միայն հիմնական, այլ նաև վերջին տարրն է, սուվերեն միավոր է, որը ենթակա չէ ոչ մի բաժանման, ոչ էլ այլ միավորների հետ միացման կամ միավորման: Մարդու իրավունքները անհատական իրավունքներ են:

Ակնհայտ է, որ մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգում ընկած մարդաբանությունն ու դրա հետ կապված աշխարհընկալումը էականորեն տարբերվում են կրոնական մարդաբանությունից ու աշխարհընկալումից: Կրոնական հայեցակետի համաձայն մարդը չի հանդիսանում **ինքնաբավ ամբողջականություն**, և նրա սկզբունքային հավասարությունը այլ մարդկանց հետ մի կողմից «սկզբնական պայմանների» հավասարություն է, մյուս կողմից՝ կոչման: Ուստի մարդկանց փոխհարաբերությունը դիտարկվում է ոչ թե որպես սուվերեն անհատների հարաբերություն, որ հարկադրված են գոյության կանոնները սահմանող ինչ-որ կոնվենցիայի միջոցով ստեղծել հակամարտող սոցիում, այլ որպես եղբայրություն, որպես ընտանիք, քանի որ ունեն ընդհանուր երկնային Հայր, որոնք հարաբերվում են պատվիրաններով ու հավատից բխող բարոյական նորմերով:

Աշխարհիկ հայեցակարգի դեպքում հասարակությունը կառուցվում է «ներքևից»՝ ելնելով անհատների կամքից, իսկ քրիստոնեականի դեպքում կառուցվում է «վերևից»: Թեև երկուսի դեպքում էլ ճանաչվում է մարդկանց հավասարությունը, սակայն ընդհանրության ընկալումը տարբեր է: Մի դեպքում դա պայմանագրի կամ կանոնադրության հիման վրա ձևավորված ազատ միություն է, մյուսում նախապես տրված է պատկանել կյանքի և կոչման մեկ ընդհանուր միջավայրին: Դա վերաբերում է և՛ ա-

բարված աշխարհին, և՛ կրոնական համայնքին:

Ակնհայտ է նաև ընտրության ընկալման տարբերությունը: Մարդու իրավունքների աշխարհիկ հայեցակարգը հենվում է լիբերալիզմի՝ ազատ ընտրության գաղափարախոսությանը, որը կատարում է անհատը՝ ելնելով իր նախընտրությունից: Կրոնական գիտակցությունը հենվում է կրոնական կոչման վրա (մարդը կոչված է հաղթահարել իր և աշխարհի փաստը՝ հոգևոր ջանքերով ձգտելով առ Աստված): Այսպես, օրինակ մարդու իրավունքները յուրաքանչյուրին երաշխավորում են հարել ցանկացած համոզմունքի, ընտրել ցանկացած աշխարհայեցողություն, ինչպես նաև ստեղծել նորը, իսկ կրոնական միջավայրում համոզմունքի կամ հավատքի ընտրությունը կատարվում է մեկ անգամ, իսկ հետագայում բանականությունն աշխատում է կատարված ընտրության շրջանակում: Ու թեև երկու դեպքում էլ խոսք է գնում մարդու կողմից սեփական «կենսաաշխարհի» կառուցման մասին, սակայն առաջին դեպքում դա անհատի աշխարհն է, իսկ երկրորդում միաժամանակ և՛ անհատական, և՛ վերանհատական աշխարհն է:

Եվրոպական երկրներում այն ունեցել է թե՛ հաջողություններ և թե՛ ցուցադրել իր թերությունները: Հաճախ անհատականության բարձր մակարդակով է բացատրվում ժողովրդագրական անկումը, հակասոցիալական ու անբարոյական վարքը, այսինքն այն ամենը, ինչն այսօր հասարակական խնդիր է Արևմուտքում:

Այստեղ հարց է ծագում, թե արդյո՞ք մարդկային երջանկության արևմտյան չափանիշները համապատասխանում են բոլոր երկրներին ու մշակույթներին: Չէ՞ որ մյուս քաղաքակրթությունները ևս ունեն իրենց կենսափորձը: Ի՞նչ է, նրանք իրավունք չունեն իրենց խոսքն ասել այս ոլորտում: Չէ՞ որ դա յուրաքանչյուր ժողովրդի իրավունքն է:

Իհարկե, մարդու իրավունքներն ունեն ունիվերսալ դրույթներ, որոնք պետք են ապահովելու համար դրանց համապիտանիությունը: Սակայն այդ ունիվերսալության սահմանների չափազանցումը հանգեցնում է մշակութային առանձնահատկությունների գործնական ոչնչացմանը: Այնինչ, պարզապես անհրաժեշտ է, որ տարբեր երկրներում մարդու իրավունքները իրականության վերածվեն՝ հաշվի առնելով տվյալ ժողովրդի մշակութային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր պատմական փորձառությունը, մշակութային ավանդությունները, մտածելակերպն ու իմաստների սեփական համակարգը: Ազգային իրավապաշտպան համակարգը կառուցելիս չի կարելի հաշվի չառնել այս իրողությունները: Այս առումով որոշ երկրներ իրենց պահում են, մեղմ ասած, բոլորովին ոչ ժողովրդավար՝ մարդու իրավունքների կիրարկման իրենց համակարգը համարելով ունիվերսալ, ավելի ստույգ՝ գերակա: Ուղղակի կամ անուղղակի միջոցներով նրանք ձգտում են իրենց ստանդարտները փաթաթել այլ ժողովուրդների կամ դառնալ այդ ոլորտի միակ դատավորը: Այս մոտեցումը հանգեցնում է այն բանին, որ հաճախ մարդու իրավունքները որոշ հզոր երկրների կողմից օգտագործվում են որպես սեփական ազգային շահերի իրացման մեխանիզմ: Դա հատկապես նկատելի է մոլորակի թեժ շրջաններում:

Այս իրավիճակում ընդունելի է միայն այն երկխոսությունը, որը բացառում է «ուսուցիչ-աշակերտ» հարաբերությունը: Նկատենք, որ մարդկային այս արատավոր ձգտումը (գերիշխել ամենքին) գալիս է պատմության խորքերից: Հայկի և Բելի ճակա-

տամարտի պատմությունը դրա վաղնջական հիշատակումն է, որը դարձավ հայության ձևավորման հիմքը: Այն ցայտուն կերպով արտահայտվեց վաղ միջնադարում՝ առիթ տալով Տիեզերական եկեղեցու բաժանմանը և շարունակաբար ընթացավ մինչև մեր օրերը: Ուշագրավ է, որ այս ոլորտում՝ մեկի և բազումի, միության և միավորության մասին, հայ հոգևոր հայրերը (Գրիգոր Տաթևացի, Ոսկան Երևանցի ևն) բավական հարուստ ժառանգություն են թողել մեզ, ինչը կարող ենք և պետք է կիրառենք մեր օրերում:

Այսօր մենք գործ ունենք ոչ թե քաղաքակրթությունների թմբկահարվող հակամարտության, այլ լոկ մոտեցումների հակամարտության հետ, որոնցից մեկը հիմնված է աշխարհի կրոնական, իսկ մյուսը՝ ոչ կրոնական (աշխարհիկ) ընկալման վրա: Մի ինչ-որ անհայտ հիմնավորմամբ տարածում է գտել այն կայուն կարծիքը, թե հենց աշխարհիկ, բարոյապես չեզոք մոտեցումը կարող է առավելագույն ունիվերսալությամբ արտահայտել մարդկության բոլոր ձգտումները և հարթել աշխարհում առկա տարբեր հակադրությունները: Ընդ որում, անտեսվում է, որ մարդկային կյանքի կրոնական և բարոյական չափանիշները ունիվերսալ ու բնութագրիչ են բոլոր ժողովուրդների համար, որ աշխարհի բնակչության մեծամասնությունը հարում է այս կամ այն կրոնին: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ պետք է զարգացնել միջազգային իրավունքը, այդ թվում նաև մարդու իրավունքների ոլորտը, ինչպես նաև ազգային օրենսդրությունը: Հակառակ դեպքում մարդկության զգալի մասում տեղի ունեցող օտարացումն ու հակամարտությունը միայն կաճի:

Աշխարհիկությունն ու կրոնականությունը.

XX դարի երկրորդ կեսին հաստատված մարդու իրավունքների և ազատությունների հայեցակարգի համար կրոնական տրամաբանությունը, որպես կանոն, վտանգավոր է համարվում, եթե չասենք թշնամական: Չէ՞ որ այն հանրային միջավայրի ու մշակույթի աշխարհիկացման գործընթացի մասն է կազմում: «Որտեղ սկսվում է կրոնական ազատությունը, այնտեղ վերջանում են մարդու իրավունքները»: Կրոնը չպետք է դուրս գա մասնավոր տարածությունից, չպետք է դադարի լինել սուվերեն անհատի «մասնավոր գործը», որի ազատությունը չպետք է ոտնահարի այլոց հավասար ազատությունները:

Տարածված է այն կարծիքը, թե իբր միայն քաղաքացիական հարաբերությունների աշխարհիկ սկզբունքները կարող են արևմտյան հասարակությանը հարիր ընդգծված կրոնական պլյուրալիզմի պայմաններում կանխել տարբեր դավանանքների հետևորդների միջև հակամարտությունները: Սակայն դեռ հարց է, թե այդ նպատակին հասնելու համար արդյո՞ք պիտանի են մարդու իրավունքների սկզբունքորեն աշխարհիկ հայեցակարգի առաջարկվող միջոցները:

Գլոբալ մասշտաբով ընդլայնվող «եվրոպական» սոցիումի մշակութային, այդ թվում նաև քաղաքական տարածություն են վերադառնում կրոնական ավանդությունները: Աշխարհիկացման ողջ ընթացքում այդ ավանդությունները շարունակել են գոյել կրոնականության նեղ շրջանակի «ընդհատակում»: Այսօր դրանք նոր շունչ են առնում՝ իրենց հետ բերելով ամբողջական աշխարհայեցողություն և կրոնական կյանքի, այդ թվում նաև բարոյականության պահանջները, որոնց ակունքը ոչ թե

բնության ծնունդ անհատն է, այլ աշխարհի Արարիչը:

Ժամանակակից համաշխարհային իրավիճակի բնութագրական առանձնահատկություններից մեկը կրոնների ակտիվացումն է[2]: Ծայրահեղորեն «անհատականացված հասարակության» մեջ սեփական ինքնության որոնման ընթացքում, Զիգմունդ Բաումանի խոսքերով, մարդը հաճախ դիմում է հենց կրոնին: Մարդուն չի բավարարում այն ունիկալությունը, որը ենթադրում է մարդու իրավունքների հայեցակարգը. նա ուզում է լսել Աստծո կոչը և պատրաստ է իր տեղը գտնել կրոնական ավանդության համակարգում:

Կրոնական այդ ակտիվացումը (կրոնների վերածնունդը) տեղի է ունենում տարբեր ձևերով՝ կախված կրոնի և դրա տարածման տարածքի առանձնահատկությունից: Այն մասնավորապես արտահայտվում է հասարակական կյանքում, այդ թվում նաև քաղաքականության մեջ, նրա մասնակցության աճով: Կրոնական գիտակցության կրողներն ու արտահայտողները դառնում են հանրային քննարկումների և քաղաքական գործընթացների ակտիվ մասնակիցներ:

Մարդկանց մոտ հարց է առաջանում, թե որքանո՞վ է մարդու իրավունքների ժամանակակից միջազգային հայեցակարգը համաձայն մարդու և աշխարհում նրա տեղի մասին Աստծո ծրագրի հետ, և որքանով է այն թույլ տալիս ուղղափառ ժողովրդին ապրել իր դավանած հավատքի համեմատ: Այսինքն, կարելի է ասել, որ որոշ առումով մարդու իրավունքների աշխարհիկ հայեցակարգը սկսում է հնանալ:

Մյուս կողմից ակնհայտ է, որ մարդկային գործունեության ցանկացած ձևի համար անհրաժեշտ էներգիան կարելի է քաղել միայն հոգևոր ոլորտից: Ուստի այդ խնդիրների հաջող լուծումը մեծ չափով կախված կլինի այն բանից, թե ինչպես դրանք կտեղավորվեն ինքնատիպ քաղաքակրթության հոգևոր պարամետրերում:

Մարդու իրավունքների կիրարկում և բարոյականություն.

Լուրջ հարցեր են կուտակվել մարդու իրավունքների կիրարկման ոլորտում, որոնք պարբերաբար ի հայտ են գալիս տարբեր մակարդակի քննարկումների ժամանակ: Դրանցից մեկը կապված է ազատություն հասկացության մեկնաբանման հետ:

Մարդու իրավունքների արժեհամակարգում ամենատարածված ու լայնորեն օգտագործվող հասկացությանը՝ մարդու արժանապատվությանը, մինչև օրս չի տրվել որոշակի սահմանում: Այն օգտագործվում է որպես մի աքսիոմա, թեև արդեն վաղուց է հասունացել դրա բովանդակության մասին խոսելու անհրաժեշտությունը: Չէ՞ որ հենց այս հասկացությունն առանցքային դեր ունի մարդուն և նրա իրավունքները ընկալելու գործում:

Մարդու իրավունքներն ամրագրում են որոշակի հնարավորություններ, որոնցից մարդը կարող է օգտվել իր հայեցողությամբ, այսինքն այդ իրավունքները պաշպանում են միայն ընտրության իրավունքը, բայց գրեթե ոչինչ չեն ասում մարդու պատասխանատվության մասին (չոտնահարես միայն դիմացինի ընտրության իրավունքը): Արդյունքում անտեսվում ու անպաշտպան է մնում չարից ազատ ու զերծ լինելու

[2] Տե՛ս **Peter L. Berger** (ed.), The Desecularization of the World: Resurgent Religion and World Politics. Washington, DC: Ethic and Public Policy Center, 1999.

մարդու իրավունքը: Չարիքից ազատ լինելու իրավունքը շարադրված է բարոյական նորմերում: Բարոյականությունը պետք է ընդունվի որպես դրական ազատություն: Բարոյականությունը պատասխանատու ընտրության արդյունքում գործելու արդեն իսկ իրականացված ազատությունն է: Ընտրության պատասխանատվությունը անձի ինքնասահմանափակումն է հանուն տվյալ անձի ու ամբողջ հասարակության բարօրության:

‹‹Բարոյականությունն ու ազատությունը մարդկային անձի անբաժանելի հատկանիշներն են, առանց որոնց մարդը կորցնում է անձնային էությունը և վերածվում մարդանման էակի: Օրենքն ի վիճակի չէ նախատեսել իրավական հարաբերությունների ամբողջ սպեկտրը, և ինքն իսկ որոշակի հենարանի կարիք ունի: Ուստի, հասարակության սոցիալական կազմակերպման կարևոր պարամետր և քաղաքացիների իրավագիտակցության ձևավորման գործոն է հանդիսանում հոգևոր-բարոյական առանցքը, որի կայունությունն ապահովում է հասարակությունը››,- ՌԴ մշակույթի և զանգվածային կապի (կոմունիկացիայի) նախարար Ա. Ս. Սոկոլով:

Մարդու իրավունքների հայեցակարգի շուրջ խոսք ասելու համար նախ հարկ է մանրազնին հետազոտել այն իր արդի վիճակում: Քննարկման առարկա են նախ և առաջ հայեցակարգի հիմքում ընկած փիլիսոփայական գաղափարները, որոնք ազդում են վերջինիս զարգացման վրա:

Մարդու իրավունքների արդի հայեցակարգի կենտրոնական հասկացությունը ‹‹մարդկային արժանապատվությունն›› է: Մարդու արժանապատվության պաշտպանության համար են ձևավորվում իրավունքներն ու ազատությունները: Դրանց շրջանակը աստիճանաբար ընդլայնվել է արևմտյան երկրների պատմական զարգացման ընթացքում՝ ընդգրկելով հասարակական կյանքի նորանոր ոլորտներ: Այդպես ի հայտ եկան քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական իրավունքները: Այսինքն՝ աստիճանաբար բացահայտվում են մարդու արժանապատվության նոր եզրեր: Վերջին տարիներին հատկապես սրվել են սեռերի միջև հարաբերությունների, մարդկային կյանքի կարգավիճակի, բիոէթիկայի հետ կապված հարցերը: Այլ խոսքով ծնունդ է առնում մարդու իրավունքների հետ կապված հասկացությունների մի նոր համակարգ, որը կապված է այն սահմանման հետ, թե ինչ է մարդը իր բնության մակարդակում: Այս իսկ պատճառով այսօր խիստ կարևորվում է ‹‹մարդկային արժանապատվություն›› հասկացության պարզաբանումը:

Այդ հասկացությունը ենթադրում է նախ, որ անհատն օժտված է արժեքով և երկրորդ, որ այդ անհատի վարած կյանքն արժեքավոր է: Քրիստոնեական ընկալմամբ խիստ կարևոր է համապատասխանությունն արժանապատվության այս երկու նիստերի միջև: Համաձայն քրիստոնեական ուսմունքի՝ մարդն արժեքով օժտված է, քանի որ նա արարված է Աստծո պատկերով ու նմանությամբ: Միաժամանակ Աստված առանձնացրեց մարդուն մյուս արարածներից և օրհնեց՝ այսինքն ցանկացավ-սահմանեց մարդու համար բարօրություն: Այսպիսով մարդու արժեքը որոշվում է Աստծո աչքում նրա ունեցած արժեքով:

Անգամ մարդու մեղսագործությունը չսասանեց Աստծո աչքում մարդու ունեցած արժեքը: Նա ոչ թե ոչնչացրեց մարդուն, այլ անում է ամեն բան նրան փրկելու՝ այսինքն վերադարձնելու համար նրան իր նախնական կոչմանը: Մինչև մեղսագործութ-

յունը մարդը ոչ միայն ակամա օժտված էր արժեքով, այլև կամավոր կերպով այդ արժեքին համապատասխան կյանքով էր ապրում: Մարդու խնդիրն էր աճել-հասունանալ այդ արժանապատվության մեջ: Իր կյանքի գործընթացում մարդը պետք է ավելի ու ավելի նմանվեր Աստծուն: Մեղսագործությունը չփոխեց այդ խնդիրը, սակայն այն դարձրեց մարդու համար անկարելի առանց Աստծո օգնության: Սակայն մարդը, կամենալով առանց Աստծո հասնել կատարելության, կորցրեց իր ստեղծագործական գործունեությունը սնող ակունքի հետ ունեցած կապը: Մարդը դադարեց համապատասխանել իր բնության արժեքին, ի վերուստ ունեցած ակամա արժեքը կամովի չիրացրեց իր կյանքում, ուստի և նշանակալի չափով կորցրեց իր արժանապատվությունը, և այժմ նրա մեծագույն նպատակն է վերադարձնել կորսվածը ու ավելացնել այն: Ուրեմն, մարդու ոչ բոլոր արարքները կարող են համապատասխանել այն նորմերին, որոնք Աստված արարման ժամանակ դրել էր մարդու մեջ: Այստեղից հետևում է, որ կան գործողություններ, որոնք չեն կարող ամրագրվել մարդու իրավունքների ու ազատությունների շարքում:

Ամենակարևորը սեփական արժանապատվությանը վերադառնալու ճանապարհին մարդու կամքի ուղղվածությունն է: Մարդն օժտված է ազատությամբ և առանց նրա կամքի Մարդուն ուղղելու Աստծո օգնությունն իսկ անհնար է դառնում: Այդ ազատության շնորհիվ մարդն ունի ընտրության իրավունք՝ կատարել բարին՝ Աստծո կամքը՝ այդպիսով վերադարձնելով իր արժանապատվությունը կամ ընտրել չարը և այդպիսով կորցնել այն: Ժամանակակից հումանիստական մտածողությունը ևս ընդունում է, որ մարդը մշտապես գտնվում է բարի և չար արարքներ կատարելու երկընտրանքի մեջ. թէ՞ որ գործող օրենքները խթանում են լավ վարքը և պատժում վատը: Սակայն աշխարհիկ հումանիզմի և կրոնական ավանդության տարբերությունն այն է, թե բարու և չարի սահմանման համար ինչը համարել հեղինակություն:

Ուշագրավ է, որ ինչ-ինչ պատճառներով արդի արևմտյան մտածողության մեջ դեռևս Ժան Ժակ Ռուսոյի ժամանակներից արմատավորվել է այն պատկերացումը, թե բավական է ապահովել ազատությունը և անհատին օժտել իրավունքներով, և նա ինքը անխուսափելիորեն կընտրի բարին ու իր համար օգտակարը: Ուստի և ոչ մի արտաքին հեղինակություն չպետք է նրան մատնանշի, թե ինչն է բարի և ինչը՝ չար: Մարդն ինքն է որոշում վարքի բարոյական նորմերը: Դա կոչվում է մարդու բարոյական ինքնավարություն: Եվ այդ ինքնավարությունը կարող է սահմանափակվել միայն այլ անհատի ինքնավարությամբ: Այս գաղափարախոսության մեջ բացակայում է մեղքի հասկացությունը և առկա է կարծիքների բազմազանությունը, այսինքն մարդը կարող է ընտրել վարքի ցանկացած տարբերակ, միայն մի պայմանով, որ իր վարքը չպետք է սահմանափակի այլ մարդու ազատությունները:

Նման մարդակենտրոն մոտեցման ցավալի հետևանքն այն է, որ այսօր շատ երկրներում կառուցվում են հասարակական կառույցներ, որոնք նպաստում են մեղքին և խուսափում են անհատի բարոյական կատարելագործմանը նպաստելուց: Հասարակությունն ընդհարվում է ցինիկ կեղծիքին. անբարոյականության թողտվությունն արդարացվում է մարդու արժանապատվության մասին ուսմունքով, ինչն իրականում կրոնական արմատներ ունի:

Հիրավի, ի վերուստ մարդն ունի ընտրության ու գործողության լիակատար ազա-

տություն, և սա քննարկման առարկա չէ: Քննարկման ու վիճարկման առարկան այն պնդումն է, թե իբր մարդը ինքուրույն կերպով կարող է կատարել իր իրական բարօրությանը համապատասխանող ընտրություն: Մեղքի մեջ գտնվող մարդն ինքնուրույնաբար միշտ չէ, որ կարող է հստակ տարբերակել՝ ինչն է բարի և ինչը չար: Պատճառն այն է, որ մեղքի հետևանքով նրա բանականությունը, կամքը և զգացողությունը գտնվում են մեղքի ոլորտում, և մարդը կարող է սխալվել իր կյանքի նպատակները որոշելիս: Բարու և չարի տարբերակման կարևորագույն չափանիշ է մարդու խիղճը, որի համար ժողովուրդն ասում է «խիղճը Աստծո ներկայությունն է մարդու մեջ»: Սակայն մեղքը նաև խղճի ձայնն է խլացնում: Բարոյական նորմերի միջոցով Աստված օգնում է մարդուն պահպանել չարի ու բարու մասին պատկերացումը: Այդ նորմերի համաձայն անընդունելի են սրբության ծաղրանքը, աբորտը, համասեռամոլությունը, էվտանազիան և մարդու իրավունքների արևմտյան հայեցակարգի կողմից ակտիվորեն պաշտպանվող վարքի համանման այլ տեսակներ:

Մեր ժամանակների հատուկ պետության բացարձականացմանն այսօր գալիս է փոխարինելու առանձին անհատի ու նրա՝ բարոյական պատասխանատվությունից զերծ իրավունքների սուվերենության բացարձակացումը: Նման բացարձակացումը կարող է քայքայել ժամանակակից քաղաքակրթության հիմքերը և հանգեցնել դրա կործանմանը, ինչպես եղել է շատերի հետ: Մարդկությունը չի կարող բարոյականությունից դուրս ապրել: Ոչ մի օրենքով չենք կարող ապահովել հասարակության կենսունակությունը, չենք կարող կանխել կաշառակերությունը, իշխանության չարաշահումը, ընտանիքների անկումը, միայնակ երեխաների ի հայտ գալը, ծնելիության կրճատումը, բնության քայքայումը, մարտնչող ազգայնամոլության, կսենոֆոբիայի և կրոնական զգացմունքների վիրավորման դրսևորումները: Եթե մարդը չի տեսնում, որ ինքը մեղք է գործում, ապա նրան ամեն բան թույլատրելի է:

Անմարդկային է դառնում նաև այն հասարակությունը, որում մարդկային իրավունքները գործիք են դառնում բնազդի ազատագրման համար, իսկ բարու և չարի հասկացությունը շփոթվում ու դուրս է մղվում բարոյական ինքնավարության և բազմակարծության գաղափարների կողմից: Նման հասարակությունը կորցնում է անհատի վրա բարոյական ներգործության լծակները:

Այսպիսով, անհատի արժանապատվության միակողմանի կործանարար բացարձակացումը կանխելու և այն ողջախոհ կերպով հավասարակշռելու համար անհրաժեշտ է նույն մակարդակի բարձրացնել մարդու արժանապատիվ ապրելու և սեփական վարքի համար բարոյական պատասխանատվություն կրելու նորմը:

Մարդու իրավունքների և բարոյականության ներդաշնակությունը

Նախ և առաջ օրենսդրությունը պետք է զգայուն լինի բարոյականության նկատմամբ: Օրենսդրության մեջ պետք է արտացոլվեն հասարակության մեծամասնության կողմից ընդունվող բարոյական նորմերը:

Երկրորդը, պետք է լրացվի հասարակության մեջ առկա բարոյական դաստիարակության պակասը: Անհրաժեշտ է նախապատրաստել քաղաքացիներին օգտվելու ազատությունից ու իրավունքներից՝ հաշվի առնելով բարոյական նորմերը: Դրանով պետք է զբաղվի պետությունը՝ սերտորեն համագործակցելով բարոյական դաստիա-

բակության հասարակական ինստիտուտների հետ՝ ներառյալ դպրոցը և երկրի կրոնական համայնքները: Դա ենթադրում է, որ պետությունը պետք է մտահոգ լինի կրթության, սոցիալական ծառայության ու առողջապահության հասարակական կառույցներ և բանակ մուտք գործելը կարգավորող օրենսդրական ակտերի մշակմամբ:

Այս ոլորտներում պետք է գործեն երկրի բոլոր կրոնական համայնքները այն չափով ու ծավալով, որը համապատասխանում է հասարակության մեջ նրանց ներկայացվածությամբ: Ամենակարևորը, որ այդ ոլորտներում պետք է կատեգորիկ կերպով բացառվի միսիոներական մրցակցությունը՝ խուսափելու համար միջկրոնական հակամարտությունից, որին անխուսափելիորեն հանգեցնում է նոր հետևորդներ ունենալու կրոնական կազմակերպությունների պայքարը:

Նշյալ ներդաշնակման գործում շատ կարևոր է ՁԼՄ-ների դիրքորոշումը: Նրանք պետք է ներկայացնեն ազատությունը կիրարկելու դրական օրինակները: Այնինչ այսօր որպես հաջող ապրելակերպ է մատուցվում սպառումը, բռնությունը, այլասերումը, մոլությունը և այլ արատներ: Արդարացնելով իրենց, նրանք ասում են, որ նման արտադրանքը պայմանավորված է հասարակական կարիքով և լավ է վաճառվում: Սակայն անվիճելի է, որ արատը հեշտ է վաճառվում, քանի որ մեղքին հակված մարդն այն հեշտ է ընկալում: Նման գործողությունները կոչվում են գայթակղություն:

Բայց ժամանակակից մարդը միայն արատի կարիք չունի. նա երջանկություն, խաղաղություն, իսկական սեր և այլ առաքինություններ է փնտրում: Ուշագրավ է, որ այսօր մարդիկ ավելի շատ են դիտում հին խորհրդային ֆիլմերը, որտեղ արծարծվում են կյանքի լուրջ խնդիրները:

Մարդու իրավունքներն ամրագրող նորմերը պետք է նպաստեն մարդու կատարելագործմանը, այլ ոչ թե նրա մեղսական վիճակի արդարացմանը, պետք է պահպանեն մարդու արժեքը ու նպաստեն նրա արժանապատվության աճին:

Պետք է մերժվեն ազգի և էթնիկ խմբի իրավունքների, կրոնի, լեզվի, մշակույթի նկատմամբ ոտնձգությունները, դավանանքի ու սեփական ապրելակերպի սահմանափակումները, կրոնական ու ազգային հողի վրա կատարվող հանցագործությունները, չինովնիկների ու գործատուների կամայականությունները, զինակիցների անիրավ վերաբերմունքը զինվորի նկատմամբ, սոցիալական հաստատություններում երեխայի տարիքավոր մարդկանց ծաղրանքը: Անթույլատրելի է ու հակազդեցության ենթակա դեստրուկտիվ աղանդների կողմից մարդկանց գիտակցության մանիպուլյացիան, ստրկավաճառությունը, պոռնկությունը, թմրամոլությունը, խաղամոլությունը, քանի որ նման երևույթները մարդուն հեռացնում են իր արժանապատվությունից: Նման արատների դեմ պայքարի կոչ պետք է արվի հասարակությանը և այդ պայքարի մեջ պետք է մտնի եկեղեցին:

Ուղղափառ քրիստոնեության տեսակետից հենց սա է իրավապաշտպան գործունեությունը:

Ընտրության ազատությունը և բարոյականությունը.

Այստեղ առաջ է գալիս մի կարևոր հարց. ինչպե՞ս ապահովել մարդու ազատ ընտրությունը և միաժամանակ աջակցել այդ ընտրության բարոյական ուղղվածությանը: Այս ճանապարհին կարևոր են թե՛ մարդկային ջանքերը և թե՛ Աստծո օգնությունը,

որն առաջնային տեղ պետք է ունենա: Աստծո հետ մարդու շփումը օգնում է նրան սովորել տարբերակել բարին ու չարը, և ուժ գտնել բարին ընտրելու: Աղոթելիս, եկեղեցու խորհուրդներին մասնակցելիս և բարեգործություն անելիս տեղի է ունենում Աստծո հետ մարդու միացումը, և բարին գործելու ուժ է տրվում: Այդ իսկ պատճառով էլ հավատացյալ մարդու համար առաջնային տեղ են գրավում հենց դրանք: Ազատության հետ մեկտեղ դրանք դառնում են երկրի վրա և երկնքում մարդու բարօրության գլխավոր պայման:

Կարևոր են նաև մարդկային ջանքերը, որոնք պետք է ուղղորդվեն հասարակական այնպիսի հարաբերությունների ձևավորմանը, որը մի կողմից կապահովի անհատի ազատությունը, իսկ մյուս կողմից կօգնի նրան հետևել բարոյական նորմերին:

Թերևս սխալ կլիներ քրեորեն պատժելի դարձնել խաղամոլությունը, էվտանազիան, համասեռամոլությունը, սակայն չի կարելի նաև դրանք ընդգրկել օրենսդրական նորմերում, առավել ևս որպես հասարակայնորեն ընդունելի նորմեր: Երբ վարքի նման նորմերը պաշտոնապես թույլատրող օրենքներ են ընդունվում, դրանք մատչելի դառնում են ոչ միայն իրենց ընտրությունը կատարած փոքրամասնական խմբերի համար, այլև վարքի այդ նորմերը հասարակության մեջ խթանելու և անսանձ քարոզելու առիթ ու պայման են ստեղծում: Եվ քանի որ մեղքը հրապուրիչ է, այն արագորեն վարակում է հասարակության զգալի շերտերը, մանավանդ երբ այդ քարոզի համար ներդրվում են մեծ գումարներ և օգտագործվում են մարդու գիտակցության վրա ներգործելու նորագույն միջոցներ:

Դեռևս 2000 թ. Ռուս Ուղղափառ Եկեղեցու ընդունած «Ռուս Ուղղափառ Եկեղեցու սոցիալական հայեցակարգի հիմունքները» փաստաթղթում առկա էր մարդու իրավունքների մասին Եկեղեցու դիրքորոշման սկզբունքը: Ըստ այդմ «Աշխարհիկացման ընդլայնմանը համարժեք մարդու անօտարելի իրավունքների բարձր սկզբունքները վերածվել են Աստծո հետ կապ չունեցող անհատի իրավունքների մասին հասկացության: Ընդ որում, անհատի ազատության պաշտպանությունը վերափոխվել է կամայականության (քանի դեռ այն չի վնասել այլ անհատներին) պաշտպանության», ինչպես նաև պետությունից անհատի ու ընտանիքի գոյության համար որոշակի նյութական մակարդակի երաշխիքների պահանջի: Քաղաքացիական իրավունքների ժամանակակից աշխարհիկ հումանիստական համակարգում մարդը մեկնաբանվում է ոչ թե որպես Աստծո պատկեր, այլ որպես ինքնաբավ սուբյեկտ: Սակայն առանց Աստծո գոյություն ունի միայն ընկած մարդը, որը միանգամայն հեռու է քրիստոնյաների կողմից ձգտելի կատարելության իդեալից: Այնինչ, քրիստոնեական իրավագիտակցության համար մարդու ազատության և իրավունքների գաղափարը անխզելիորեն կապված է ծառայության գաղափարի հետ: Քրիստոնյաներին իրավունքները պետք են նախ և առաջ այն բանի համար, որ դրանցով օժտվելով, նրանք կարողանան լավագույն կերպով իրագործել Աստծուն նմանվելու իրենց բարձր կոչումը, կատարել իրենց պարտքը Աստծո և Եկեղեցու առաջ, այլ մարդկանց, ընտանիքի, պետության, ժողովրդի և այլ մարդկային համակեցությունների առաջ»:

Մարդը և հասարակությունը ինքնուրույն չեն կարող հասնել բարոյական իդեալին: Դրա համար անհրաժեշտ է ունենալ Աստծո շնորհը, որը տրվում է ճշմարիտ եկեղեցու միջոցով: Անհատն ու սոցիումը չեն կարող բարոյական լինել առանց դաստիարակության և վարժանքի, առանց բարու աջակցության և չարի սահմանափակ-

ման, այդ թվում այնպիսի չարի, որը Եկեղեցու դիրքերից մեղք է համարվում, իսկ արդի իրավունքում «նորմալ երևույթ»:

Տարօրինակ կլիներ, որ շատ մեղքեր սահմանափակվեին օրենքի ու պետության իշխանությամբ. դրանք պետք է բուժվեն ընտանիքի, եկեղեցական համայնքի, քաղաքացիական ընկերությունների ներսում: Եկեղեցին կոչված է հրապարակայնորեն մերկացնելու մեղավոր գործերը՝ մղելով մարդկանց ապաշխարության ու ուղղման:

Մարդու իրավունքներն անխզելիորեն կապված են պարտավորությունների և քաղաքացիական պատասխանատվության հետ, որոնց անհատի ինքնահրացումը կարող է վերածվել մերձավորի, նախորդ սերունդների աշխատանքի, ապագայի սերունդների կենսական շահերի նկատմամբ էգոիստական, սպառողական վերաբերմունքի:

Քրիստոնեական ավանդության համար կան արժեքներ, որոնք ավելի բարձր են կանգնած, քան մարդու իրավունքները, անգամ կյանքի իրավունքը: Դրանք են՝ հավատը, քանի որ լավ է մեռնել, քան կորցնել այն, սրբությունը, քանի որ ոչ մի պայմանում քրիստոնյան չպետք է թույլ տա դրանց պղծումը, աղետի մատնված և տանջվող մերձավորի՝ իր ընտանիքի, իր համայնքի, իր ժողովրդի կյանքն ու բարօրությունը: Այնինչ մարդակենտրոն քաղաքական-իրավական համակարգում, որտեղ պաշտպանվում է միայն մարդու և հասարակության երկրային շահերը, հավատի ու Հայրենիքի արժեքները շատ ավելի ստորին մակարդակում է դնում, քան այս աշխարհում մարդու գոյապահպանությունը, հարմարավետության, բավարարության, առողջության, հաջողության արժեքները:

Հարկ է, որ արդի աշխարհը հարգի և ներդաշնակի արժեքների տարբեր կարգերը և հրաժարվի մարդակենտրոնության մոնոպոլիան օրենքի ու հասարակական կարգի վերածելու մտքից: Միայն այդ գայթակղությունը հաղթահարելով, միայն «լիբերալ տոտալիտարիզմից» հրաժարվելով մենք կկարողանանք խուսափել քաղաքակրթությունների հակամարտությունից:

Օգտագործված աղբյուրներ –

- Выступление председателя ОВЦС МП митрополита Смоленского и Калининградского Кирилла на панельной дискуссии "Права человека и межкультурный диалог" VII сессии Совета по правам человека ООН, Женева, 18 марта 2008 г., Источник: Интерфакс-Религия
- Александр Кырлежев, Взаимоотношение концепции прав человека и религиозных ценностей, Доклад на семинаре "Нравственные основы и эволюция понятия прав человека в поликультурном обществе"
- Права человека и нравственная ответственность
- Доклад митрополита Смоленского и Калининградского Кирилла на X Всемирном русском народном соборе, 05 апреля, 2006.
- Протоиерей Всеволод Чаплин, заместитель Председателя Отдела внешних церковных связей Московского Патриархата; Доклад на конференции "Диалог цивилизаций", Родос, 6 октября 2005 год.